Արձանագրություն N 2

ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(15/6)-17/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

23 հունիսի 2017 թ.
ժամը 11:00

ք. Երևան

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Գևորգյանը, անդամներ՝ Լևոն Հարությունյանը, Արթուր Մանուկյանը, Դավիթ Շատվերյանը, Գայանե Օսիպյանը և քարտուղար՝ Վարդան Նավասարդյանը:

Օրակարգ

ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(15/6)-17/1 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(15/6)-17/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Կարեն Գևորգյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին՝

- հայտ են ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը և գտնվելու վայրը					Նախահաշվային գներ
	«ԱՐԼԵՇԱՏԻ ՍԱՐԳԻՍ» ՍՊԸ ՀՀ ք.Արթիկ, Տուֆագործների 39Ա	«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ ՀՀ ք. Երևան, Նար-Դոսի 122	«ԴԱՐՖ» ՍՊԸ ՀՀ ք. Երևան, Գայի պողոտա 1/7	Ա/Ձ Հայկ Գալստյան ՀՀ ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս 84/5	«ՄԵԳԱՊՈԼԻՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ ՀՀ ք. Երևան, Բաղրամյան 2, նրբ.15	
	ԱԱՀ վճարող	ԱԱՀ վճարող	ԱԱՀ վճարող	ԱԱՀ վճարող չի	ԱԱՀ վճարող չի	
	Գնային առաջարկը/ՀՀ դրամ, առանց ԱԱՀ/					
1	-	-	-	-	-	1 700 000
2	-	-	-	-	-	680 000
3	1 170 000	899 900	-	-	1 100 000	1 392 000
4	1 260 000	1 299 900	1 491 000	-	1 295 000	1 470 000
5	500 000	433 300	441 667	500 000	490 000	490 000

Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ՝

- **«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ-ի** և **«ՄԵԳԱՊՈԼԻՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի** հայտերում բացակայում է հայտի ապահովումը:
- **Ա/Ձ Հայկ Գալստյանի** հայտում բացակայում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը:
- **«ԱՐԼԵՇԱՏԻ ՍԱՐԳԻՍ» ՍՊԸ-ի և «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի** հայտերում առկա են պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում: Իրականացված գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

- **«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ-ի և «ՄԵԳԱՊՈԼԻՍ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի** -ի հայտերը մերժել հայտի ապահովում չներկայացնելու հիմքով պայմանավորված:
- **Ա/Ձ Հայկ Գալստյանի** հայտը մերժել տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված չլինելու հիմքով պայմանավորված:

Հաշվի առնելով որ մասնակիցների ներկայացված գները գերազանցում են նախահաշվային արժեքը, հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և բավարար գնահատված մասնակիցներին հրավիրել գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների:

Նիստը վերսկսել գնի նվազեցման միաժամանակյա բանակցությունների օրը՝ 2017թ. հունիսի 27-ին ժամը 15:00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում /գնումների համակարգման բաժնում/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Կարեն Գևորգյան

անդամներ _____ Լևոն Հարությունյան

_____ Արթուր Մանուկյան

_____ Դավիթ Շատվերյան

_____ Գայանե Օսիպյան

քարտուղար _____ Վարդան Նավասարդյան